

ք. Երևան

20-ը հուլիսի 2018թ. ժամը 17⁰⁰

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝**ՀՀ ՊՆ աշխատակազմի ղեկավարի տեղակալ, ՔՀԾ 2-րդ դասի պետական խորհրդական Ս. Աթոյան, գնահատողներ՝****ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՁԲՖԿ ծառայության պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ա. Պապյան,****ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Հ. Բադալյան, Բացակայում է՝****ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա.**

Մաղաքյանը:

Գնումները համակարգող՝**ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի առաջատար ծառայող Մ. Հոխեյան:****«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

(Մ. Հոխեյան)

1. Սեմագ ՍՊԸ-ից ստացված գրության քննարկում և որոշման կայացում.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Սեմագ ՍՊԸ-ից ստացված գրության քննարկում և որոշման կայացում.

(Մ. Հոխեյան)

1.1 Սեմագ ՍՊԸ-ից ստացված գրությունում նշված էր, որ «Դառես» ՍՊԸ-ն և «Երվադա» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցել են համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա, ինչի պայմաններում եթե անգամ նշված մասնակիցները մինչև համատեղ գործունեության պայմանագրի կնքելը հանդիսացել են շրջառության հարկ վճարողներ, ապա ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 7-րդ մասի ուժով՝ համատեղ գործունեության պայմանագրի կնքելու արդյունքում վերջիններս այլևս չեն կարող համարվել շրջանառության հարկ վճարողներ: Իսկ քանի որ ՀՀ հարկային օրենսգրքի 8-րդ հոդված 3-րդ մասի 1-ին կետի և 253-րդ հոդվածի համաձայն՝ շրջանառության հարկին փոխարինում է ԱԱՀ, ուստի համատեղ գործունեության պայմանագրի կնքելու ուժով՝ ՀՀ հարկային օրենսգրքի՝ 254-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ համատեղ գործունեության պայմանագրի կողմերը՝ «Դառես» ՍՊԸ-ն և «Երվադա» ՍՊԸ-ն այլևս չեն կարող համարվել շրջանառության հարկ վճարող և որպես հետևանք դարձել են ԱԱՀ վճարող ընկերություններ: Այսպիսով համատեղ գործունեության պայմանագրի կնքելու ուժով նշված ընկերությունների կողմից ներկայացված գնային առաջարկի հիման վրա կնքվող գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, սակայն գնային առաջարկում առանձնացված տողով չի նախատեսվել այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ուստի հիմք ընդունելով վերը նշված փաստարկները Սեմագ ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովից պահանջում է՝ կատարել «Դառես» ՍՊԸ-ի և «Երվադա» ՍՊԸ-ի հայտի վերագնահատում և դադարեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.07.2018թ. ժամը 12:00 տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության 1.2-րդ կետի համաձայն՝ «Դառես» ՍՊԸ-ին և «Երվադա» ՍՊԸ-ին /Կոնսորցիում/ վերոհիշյալ ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչելու մասին որոշումը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Սեմագ ՍՊԸ-ից ստացված գրությունը և այն հանգամանքը, որ արդեն իսկ 16.07.2018թ. ԴՎԱ/2567 գրությամբ ՀՀ Ֆինանսների նախարարություն ներկայացվել է պարզաբանում /Տալ պարզաբանում՝ համատեղ գործունեության կարգով /կոնսորցիումով/ մասնակցության դեպքում գնահատող հանձնաժողովները ինչ մոտեցում պետք է դրսևորեն ներկայացված հայտերի գնահատման վերաբերյալ՝ գնային առաջարկները ԱԱՀ-ով կամ առանց ԱԱՀ լինելու դեպքում՝ միևնույն ժամանակ ՀՀ «Հարկային օրենսգրքի» 254-րդ հոդվածի 3-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն սահմանված է, որ շրջանառության հարկ վճարողներ չեն կարող համարվել համատեղ գործունեության պայմանագրի կողմ հանդիսացող կազմակերպություններ/, որոշեց կասեցնել նիստը և նիստը շարունակել փազոր մարմի կողմից վերոհիշյալ հարցի վերաբերյալ պարզաբանման պատասխանը ստանալու հաջորդ աշխատանքային օրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Մ. Հոխեյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/14» ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել լիազոր մարմնի կողմից գրության պատասխանը ստանալու հաջորդ աշխատանքային օրը ժամը 10³⁰-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)

 Ս. Աղոյան

Գնահատող

 Ա. Պապյան

Գնահատող

 Լ. Բաղայան

Գնումները համակարգող՝

 Մ. Հոխեյան